

**Հ.Բ.Ը.Միութեան 84րդ Ընդհանուր Ժողովը
Խնամակալներու Խորհուրդ Մը
Եւ**

Կեդրոնական Վարչական Ժողովի Ութը Նոր Անդամներ Կ'ընտրէ

ՀԲԸՄիութիւնը Դեկտեմբեր 9, 2006ին, Փարիզի Ինթըրֆանթինէնթալ պանդոկին մէջ գումարուած 84րդ Ընդհանուր Ժողովին, իր երկարամեայ Կեդրոնական Վարչական Ժողովի կազմին առընթեր ֆուէարկեց Խնամակալներու Խորհուրդ մը կազմել: Այս նոր Խնամակալներու Խորհուրդը պիտի բաղկանայ Կեդրոնական Վարչական Ժողովի հինգ աւագ անդամներէ, ներառեալ նոյն կազմին շրջանը բոլորած անդամներ՝ Լուիզ Մանուկեան Սիմոն, Նազար Նազարեան, Սարգիս Տեմիրեան, Գառնիկ Եագուպեան, Րիչըրտ Մանուկեան, ինչպէս նաեւ Միութեան Նախագահ Պերն Սեդրակեան:

ՀԲԸՄ-ը հանոյժով կը յայտարարէ նաեւ իր Կեդրոնական Վարչական Ժողովի կազմին յաւելումը եռանդուն ութը նոր անդամներով՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներէն՝ Երուանդ Տեմիրեան, Նազարէթ Ֆըստըֆեան, Սարգիս Հեպեան, Լեւոն Նազարեան, Զուիցերիայէն՝ Վահէ Կապրաշ, Արժանթինէն՝ Ռուբէն Քէշիշեան, Գանատայէն՝ Պերն Փափագեան, եւ Սուրիայէն՝ Վազգէն Եագուպեան:

Պերն Սեդրակեան պիտի շարունակէ որպէս Նահագահ Կեդրոնական Վարչական Ժողովի, եւ մնացեալ ինը անդամները, ԱՄՆէն՝ Մ. Մայքըլ Անսուր, Գերոլ Պաղտասարեան-Ասլանեան, Ժոզէֆ Պասրալեան, Սէմ Սիմոնեան, Սիման Սիմանեան, Տիգրան Թեքիզեան, Ֆրանսայէն՝ Արիս Ադամեան, Լեւոն Քէպապեան, Գանատայէն՝ Արշաիր Կէօնեան, որոնք պիտի շարունակեն պաշտօնավարել մինչեւ իրենց շրջանին աւարտը:

ԵՐՈՒԱՆԴ ՏԵՄԻՐԷԱՆ

Պր. Տեմիրեանը վերջերս ընտրուած է «Interaudi Bank New York»ի տնօրէն եւ ստանձնած նոյն դրամատան վարիչ տնօրէնի պաշտօնը: Նախապէս, Լոս Անճելոս, Գալիֆորնիոյ մէջ, Պր. Տեմիրեան կը զբաղէր առեւտրական եւ բնակելի շէնքերու կալուածային առեւտուրով: Նախկին պաշտօններէն կարելի է թուել Գալիֆորնիայի «Cedars Bank»ի տնօրէնութիւնն ու փոխ-ատենապետութիւնը: 1991էն 2002, Պր. Տեմիրեանը ՀԲԸՄի Մանուկեան-Տեմիրեան Վարժարանի (Գանոկա Փարֆ, Գալիֆ.) Խնամակալ Մարմնի անդամ եղած է: Շրջանաւարտ է տնտեսագիտութեան նիւթով Լոս Անճելոսի Pepperdine համալսարանէն՝ արժանանալով առեւտրական վարչութեան մագիստրոսի աստիճանին:

ՆԱԶԱՐԷԹ Ա. ՖԸՍՏՐԳԷԱՆ

Պր. Ֆըստըգեանը վարիչ Տնօրէնն է «Citigroup» կայուն եկամուտի բաժնին, ինչպէս նաեւ «Global Capital Markets Products Group»ին պետը: 1992ին Պր. Ֆըստըգեանը միացաւ «Solomon Brothers» Ընկերութեան «Structured

Finance» խումբին՝ կեդրոնաձևով նոր արտադրությանը վրայ: Նախապես, վարիչ տնօրեն էր «Moody's Investors Service» ընկերության, գոյժով ապահովուած բաժնեթուղթեր սակագրելու կամ արժեւորելու պատասխանատուութեամբ: Պր. Ֆրստըզմեանը շրջանաւարտ է ՀԲԸՄի Յովակիմեան-Մանուկեան վարժարանէն (Լիբանան), պսակաւոր գիտութեանց աստիճան ունի ելեկտրական նարտարագիտութեան միւլիմ մէջ՝ Պէլլրութի Ամերիկեան Համալսարանէն, Մագիստրոս գիտութեանց աստիճան նոյն միւլիմ մէջ Northwestern Համալսարանէն, եւ Մագիստրոս առեւտրական վարչութեան միւլիմ մէջ J. L. Kellogg Graduate School of Managementէն:

ՎԱՀԷ ԿԱՊՐԱՇ

ժընեւարնակ (Զուիցերիա) Պր. Կապրաշը աւագ գործադիր տնօրենն է «Cofinor SA»ի, ինչպէս նաեւ ընտանիքին հետ տէրը « Société Gabrache SA» անուան հիւրանոցի եւ անշարժ կալուածի ընկերութեան: Controllerն է նաեւ Pregny-Chambesy ժընեւեան Ազատական Կուսակցութեան: Աւելի քան 20 տարիներ ան եղած է Զուիցերիոյ Հայ Միութեան Նախագահը: Անկէ զատ, Պր. Կապրաշը կը նախագահէ Զուիցերիական զանազան հայկական հիմնարկութիւններու, ներառեալ Տիրան եւ Զարլզ Փիլիպոսեան, «Արմէնիա», եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հիմնարկութիւնները: Թօփալեան Հիմնարկութեան վարչութեան անդամ է: Ստացած է Մագիստրոս առեւտրական վարչութեան աստիճան:

ՍԱՐԳԻՍ ՀԵՊԵՃԵԱՆ

Պր. Հեպեմեան գործընկեր է «Cravath, Swaine & Moore LLP» անուան միջազգային փաստաբանական ընկերակցութեան՝ բաղկացած 450 իրաւաբաններէ: Պր. Հեպեմեանը ընկերակցական հարցերու փաստաբան է, մասնագիտանալով տեղական եւ արտասահմանեան միացումներու եւ տիրացումներու գործընթացին մէջ: Գործատեղին Նիւ Եորք է, սակայն բաւական ժամանակ անցուցած է նաեւ ընկերութեան Լոնտոնի եւ Հոնկ Գոնկի գրասենեակներուն մէջ: Վերջերս իր ուշադրութիւնը կեդրոնացուցած է այն յանախորդներուն վրայ, որոնք պաշտպանութեան, առողջապահութեան եւ հանգիստի մարզերուն մէջ կը գործեն: Ան «Միջազգային Տնտեսական Իրաւաբանութեան Review»ի օժանդակ խմբագիրներէն է: Շրջանաւարտ է Columbia Համալսարանէն՝ տնտեսագիտութեան եւ իրաւաբանութեան մասնագիտութեան մարզերուն մէջ: Պր. Հեպեմեան կը բնակի Էնկլըուտ Բլիֆս, Նիւ Յըրքի:

ՌՈՒԲԷՆ ՔԷՇԻՇԵԱՆ

Պր. Քէշիշեան Պուէնոս Այրէս, Արժանթին ծնած գործարար մըն է. ներկայիս Ատենապետն է ՀԲԸՄի Պուէնոս Այրէսի Մասնամիւլիմ: Իր պատանեկութեան տարիներէն սկսեալ, գործօն դեր ստանձնած է հայ կազմակերպութեանց կեանքէն ներս, յատկապէս ՀԲԸՄի: 1963էն սկսեալ, 10 յաջորդական տարիներով, Պուէնոս Այրէսի ՀԲԸՄի Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան ատենապետութիւնը վարեց: 1973էն սկսեալ, Պր. Քէշիշեան

մաս կազմած է Պուէնոս Այրէսի Մասնանիւղի վարչութեան՝ զանազան հանգամանքներով: Առաջին Հե՛Լի Համաժողովին (1981) մասնակցելէն ետքը, անդամ նշանակուեցաւ Հե՛Լի համաշխարհային Կեդրոնական Վարչութեան, ինչպէս նաեւ Հարաւային Ամերիկայի Շրջանային Յանձնախումբի ատենապետ:

ԼԵԻՈՆ ՆԱԶԱՐԵԱՆ

Տնֆօ Նազարեան Փրօֆէսօր է Բենսիլվանիոյ Թումըս շեֆրսըն Համալսարանի Հիւանդանոցին, Փոխ Ատենապետը Շոդաֆնութեան Բաժնին եւ ``Residency`` Յայտագիրներու Տնօրէնը: Անդամ է Ամերիկեան Շոդաֆնութեան Գոլէնին, Ամերիկայի Գերձայնային Ինստիտուտին եւ Շոդաֆնութեան եւ Գերձայնային Միութեան: Ան կը ծառայէ բժշկական պարբերաթերթերու վարչութիւններու մէջ, ներառեալ *Radiology, American Journal of Roentgenology* եւ *Journal of Ultrasound in Medicine*: Տնֆօ Նազարեան նախձեռնած է երեսնի Գերձայնային Ուսուցման Կեդրոնին հիմնադրութիւնը եւ որպէս նաեւ նաեւ երեսնի Պետական Բժշկական Համալսարանը շնորհած է Բժշկական Տնֆօնայի տիտղոս: Ան կը հսկէ Հայաստանէն արտասահման ժամանած բժիշկներուն վարժողական յայտագրին: Տնֆօ Նազարեան շրջանաւարտ է Harvard Collegeէն եւ Cornell Համալսարանի Բժշկական Գոլէնէն: Կը բնակի Չէրի Հիլզ, Նիւ Ճըրզի:

ՊԵՐՃ ՓԱՓԱԶԵԱՆ

Պրօ Փափազեան իրաւաբան եւ դատախազ է, ինչպէս նաեւ Վարիչ սեփականատէրերէն Փափազեան, Հէսի եւ Մայրըզի, իրաւաբանական ընկերութեան, որուն կեդրոնատեղին կը գտնուի Թորոնթօ, Գանատա: Ան նշանակուեցաւ Թագուհիին Իրաւաբանը՝ Օնթարիօ Նահանգին մատուցած ծառայութեանց համար եւ 1995ին Վերին Գանատայի Իրաւաբանական Միութեան կողմէ վկայուեցաւ իրրեւ մասնագէտ ֆաղափային դատավարութեան: Պրօ Փափազեան անդամ եղած է Թորոնթօյի Համալսարանի Կառավարիչ Մարմնին եւ Ատենապետը՝ Օնթարիօ Նահանգի Ապահովագրութեան Խորհրդատուական Վարչութեան: Պրօ Փափազեան Տնօրէնն ու Ատենադպիրն է Գանատայի Burger Kingին: 2003էն ի վեր ան կը ծառայէ որպէս Նախագահը ՀԲԸՄի Արմէն-Օնթարիոյի:

ՎԱԶԳԷՆ ԵԱԳՈՒՊԵԱՆ

Պրօ Եագուպեան վարիչ գործընկերն ու սեփականատէրն է Լէոն Ա. Եագուպեան Կապալառական Ընկերակցութեան, ինչպէս նաեւ Գլխաւոր Արդիւնաբերութեան Տնօրէնն եւ գործընկեր Սուրիա հաստատուած Բիզնէսի եւ Լէոն Եագուպեան Վանառականական եւ Կապալառութեան: Պրօ Եագուպեան երկար տարիներու մասնակցութեամբ օգտակար հանդիսացած է սուրիահայութեան, մասնաւորաբար ՀԲԸՄի գործունէութեանց: Նախապէս ծառայած ըլլալով տարբեր հանգամանքներով, ան այժմու Ատենապետն է Միութեան Դամասկոսի Հե՛Լի Վարչութեան եւ Ատենապետը Դամասկոսի Հայաստանեայց Եկեղեցւոյ Առաջնորդարանի Գործադիր Ժողովին: Ան վկայուած է Իլլինոյի Համալսարանէն նարտարագիտութեան Պսակաւոր Գիտութեանց տիտղոսով:

NewMembers2006w.jpg: ՀԲԸՄԻ Կեդրոնական Վարչական Ժողովի նոր անդամներ. (վերի շարք, ձախեն աջ) Երուանդ Տեմիրճեան՝ ԱՄՆԷՆ, Նազարէթ Ֆըստրգենեան՝ ԱՄՆԷՆ, Վահէ Կապրաշ՝ Զուիցերիայէն, Սարգիս Հեպենեան՝ ԱՄՆԷՆ, (վարի շարք, ձախեն աջ) Ռուբէն Քէշիշեան՝ Արժանթինէն, Լեւոն Նազարեան՝ ԱՄՆԷՆ, Պերն Փափագեան՝ Գանատայէն, Վազգէն Եագուպեան՝ Սուրիայէն: